

րած էր: Պարզ հագուստ մը հագուած ըլլալով, տանտիկինը ծառայ կարծեց զինքը: Եւ երբ կը սպասէր որ կերակուրի ժամանակը գայ, տանտիկինը խնդրեց որ կերակուրը պատրաստելու ձեռք տայ իրեն: Առանց ամենեին տըժգոհութեան ցոյց մը տալու՝ վերարկուն վար դրաւ ու սկսաւ փայտ կտրել: Այս միջոցիս բարեկամը ներս մտնալով զարմանքով մը կանչեց. ի՞նչ կ'ընես, փիլը պեմէն, ի՞նչ կընշանակէ ատ ըրածդ: — Իմ գէշ երևութիւն չահը կը հատուցանեմ, պատասխանեց զօրավարը: Այս պէս սովոր են մեծ մարդիկ ուրիշներուն զարմանքը իրենց վրայ դրաւելու:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ

Արտուտիկ օդապարիկ,
Քաղցրը ձայնեմ, ուր ես վարդիկ.
Լըցաւ հողմըն թերամանիկ.
Եկ պարեսցուք իմ նազելի,
Պարեսցուք նոյն եւ ճեմեսցուք,
Մեր պարտիզաց կաքաւեսցուք:
Զմեռն էանց, ժամ է գարնան,
Դաշտք և այգիքըն ծաղկեցան,
Սաղարթք ծառոց փայլիւնըս տան.
Եկ ցընծասցուք իմ սիրելի,
Պարեսցուք նոյն եւ ճեմեսցուք,
Մեր պարտիզաց կաքաւեսցուք:
Կարկաշաձայն ջուրքըն գընան,
Ծիրանածին երփն երփըն տան.
Թռչունք ձայնակցեալ խայտան.
Եկ պարեսցուք իմ ցանկալի.
Պարեսցուք նա եւ ճեմեսցուք,
Ի յեզր ուխիցըս ճեմեսցուք:
Երգող երգոյս ո՛վ անպիտան,
Յիշես եւ դու զվարդն աննըման,
Որ ունի հոտ անմահութեան.
Եւ ըզխոտ թարչամական,
Թարչամական ու անկայական
Խոտն առօրեայ խաբէական.
Եկ ցընծասցուք իմ սիրելի
Պարեսցուք նոյն եւ ճեմեսցուք,
Մեր պարտիզաց կաքաւեսցուք:

ԹՈՎՄԱՅԻ ՃԵՖՖԵՐՍԸՆԻ

ՏԱՄԱԲԱՆԵԱՑ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

Պ. Ի՞նչ որ կընաս այսօր ընել, վաղուի մի ձգեր:

Բ. Երբեք ուրիշի նեղութիւն չտաս ա. նանկ բանի համար՝ որ դու ալ կընաս ընել:

Դ. Ստակը դեռ ձեռքդ չունեցած՝ չըլլայ որ սպառես:

Ե. Ի՞նչ բանի որ առ ժամն չես կարօտիր՝ չըլլայ որ աժան է ըսելով՝ գնես. քեզի համար սուղ է այն:

Զ. Քան զքաղց, քան զծարաւ և քան զցուրտ՝ հպարտութիւնն է որ մեզի ծանր կընստի:

Է. Ոչ երբեք զղջացեր ենք քիչ ուտել. նուս վրայ:

Ը. Ոչ երբեք դժուարին կու գայ մեզի ինչ որ կամովին կ'ընենք:

Թ. Քանի տհաճութեանց պատճառ եւ զեր են մեզ այն ինչ թշուառութիւնք, որոնք երբեք չեն պատահիր:

Ժ. Ամեն բան իր դիւրին կողմէն առ:

Ի. Կիրք ելած ժամանակդ՝ խօսելէդ յառաջ՝ մինչև տասը համրէ. իսկ եթէ բարկութիւնդ սաստիկ է՝ մինչև հարիւր:

Այսպիսի սկզբունքներով է որ ազգ մը մեծ կ'ըլլայ: